ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
2021 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կողմից շարունակվել է իրականացվել հետևողական աշխատանքներ թանգարանային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանը համագործակցել է Ոստիկանության, կրթահամալիրի ծառայությունների, Հայաստանի ազգային գրադարանի և Հարավ-կովկասյան երկաթգծի թանգարանի հետ:

Կրթահամալիրի վճարովի ուսուցման սովորողների հետ միասին թանգարանի դիմացի ճեմասրահում տեղադրվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմում զոհված Կրթահամալիրի վճարովի ուսուցմամբ սովորողներ Նարեկ Մանուկյանի, Դավիթ Ջավալյանի, Նորայր Պետրոսյանի, Վախթանգ Օհանյանի և Վահե Խաչատրյանի լուսանկարները:

Կրթահամալիրի Ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի օգնությամբ Կրթահամալիրի կայքէջի Ոստիկանության պատմության թանգարան բաժնում տեղադրվել է <ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի 2019թ. կատարած աշխատանքների մասին տեղեկանքը>, ինչպես նաև նշված բաժնին է տրամադրվել կրթահամալիրի պատմության վերաբերյալ լուսանկարներ կրթահամալիրի կայքէջի <Մեր մասին> բաժնում տեղադրելու համար: Ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ Դ.Հովսեփյանի կողմից համակարգչի միջոցով ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանվել է կրթահամալիրի կայքէջում տեղադրված ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի մասին տեղեկանքը, ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի գործունեության կարգը: Նշված փաստաթղթերը բաժնի միջոցով խմբագրվել և տեղադրվել են թանգարանի կայքէջում:

Կրթահամալիրի <Պատիվ ունեմ> պաշտոնաթերթի խմբագրական կոլեգիայի օգնությամբ Կրթահամալիրի տարածքում տեղադրված ցուցափեղկերում տեղադրվել է նշված պաշտոնաթերթի 2021թ. 10 համարը:

ՀՀ ոստիկանության նախկին աշխատակից Համլետ Սահակյանի վերաբերյալ ֆոնդերը համալրելու համար ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչությունից ստացվել է նրա անձնական գործը և ուսումնասիրվել:

Հայաստանի ազգային գրադարանից հայտնաբերվել է 29.12.1989թ. <Խորհրդային Հայաստան> թերթում տպագրված <Ով է տերը> հոդվածը, որում լուսաբանվել է Երևանի ՆԳՎ ՊՊԾ գնդի կատարած աշխատանքները Ղարաբաղյան շարժման ժամանակ:

Հարավ-կովկասյան երկաթուղու, ոստիկանության Կենտրոնի, Մալաթիայի, Գյումրու և Երևան քաղաքի վետերանների, ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված Համլետ Սահակյանի ընտանիքի անդամների Կրթահամալիր և թանգարան այցելությունը լուսաբանվել է ՀՀ ոստիկանության, կրթահամալիրի կայքերում և <Պատիվ ունեմ> պաշտոնաթերթում:

Աշխատանքներ են տարվել նաև թանգարանի ցուցադրական ֆոնդը համալրելու ուղղությամբ:

Թանգարանում տեղադրվել է ՀՄՊ մասնակից, Էջմիածնի, Շահումյանի, Սպանդարյանի ՆԳ բաժինների նախկին պետ, միլիցիայի պաշտոնաթող գնդապետ Բաբկեն Քալանթարյանի <Ձմեռ> յուղաներկը: Լուսաբանվել է Շիրակի ՆԳ բաժնի նախկին պետ, միլիցիայի փոխգնդապետ Համլետ Սահակյանին առնչվող ֆոնդերը:

Նշված ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում է եղել նաև թանգարանի գործունեության իրավական ապահովման աշխատանքները:

Մշակվել է ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի ավագ տեսուչի ֆունկցիոնալ պարտականությունները, որը 15.02.2021թ. հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարան են այցելել շուրջ 430 անձ:

Տեղին է նշել, ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Վ.Մարտիրոսյանի՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանի ուղեկցությամբ, ինչպես նաև կրթահամալիրի ուսումնական կենտրոնի ընդհանուր պատրաստականության կրթաճյուղի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ալեքսանյանի գլխավորությամբ <Ոստիկան> որակավորման 2-րդ և 3-րդ դասակի 35 սովորողների այցելությունը թանգարան:

Թանգարան են այցելել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության գործերի կառավարման վարչության պետ Հայկ Հակոբյանը, Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դեկան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գևորգ Սերգեյի Թադևոսյանը, Արարատի մարզի Գեղանիստ և Նիզամու համայնքների դպրոցների աշակերտները, Շիրակի պետական համալսարանի ուսանողներ <Իրազեկ քաղաքացիների միավորում> ՀԿ նախագահ Դ.Իոաննիսյանի ուղեկցությամբ, Վանաձորի պետական համալսարանի ուսանողները ՀՀ ոստիկանապետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի գլխավորությամբ ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության կազմավորումների ներգրավմամբ «Շանթ-2021» հատուկ վարժանքին մասնակցած ՀՀ պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների, ոստիկանության և ԱԱԾ համապատասխան ծառայությունների ղեկավարների, Բելառուսի ՆԳՆ ներքին զորքերի, Ղրղզստանի, Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունների, Տաջիկստանի նախագահին առընթեր թմրանյութերի վերահսկման գործակալության և ՀԱՊԿ քարտուղարության ներկայացուցիչները, Հարավ-կովկասյան երկաթուղու, ոստիկանության Կենտրոնի և Մալաթիայի վետերանները, Չեխիայի հանրապետության ոստիկանության ուսումնական և վերապատրաստման վարչության աշխատակիցները, ոստիկանության Գյումրու և Երևան քաղաքի վետերանները,ծառայողական պարտականությունների ժամանակ զոհված Համլետ Սահակյանի ընտանիքի անդամները, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները:

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի
առաջատար մասնագետ, ոստիկանության
պաշտոնաթող գնդապետ **Դ.Հովսեփյան**

< > 2021 թ.